

**ԱԳԱՀ ՏԻՐԱՅՈՒՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
քարքառ (խոսվածք)**

Մի կնիկ ա ըլլմ, մի տղա յա ունենմ, էլ ուրիշ մի բան էլա ունի ոչ: Դրանք շատ քյասիք են ըլլմ: Մի տիրացու էլ մի ֆորի միչի մի բանի տեղ ա գիդենալիս ըլլմ, հմա կարենալիս չի ըլլմ հանե: Գալիս ա էդ կնգա կուշտը, ասմ ա.— Ես անհիշատակ մարթ եմ, քո տղին ինձ տու պիեմ, ինձ տղացու շինեմ, համ էլ դիր կստվրցնեմ, գրաճանանչ կշինեմ:

Էնա էդ կնգանը փող էլ ա տալիս, մթամ լավութին ա անմ, տղին վեր ա ունմ, տանմ: Էդ տղին տանմ ա մի խոռը ծմակ, մի ֆորի գլխի կաղնմ են: Էդ ֆորի գլխին մի ջղացքար ա ըլլմ դրած: Էդ տիրացուն չրչարվմ ա— չրչարվմ, կարմ չի վեր ունի: Էդ տղեն մի ձեռը տանմ ա, էդ ա քաշմ, քարը գլխի վրա ցից ա անմ:

Բաց են անմ, տենմ միչին մի գութանի խոփ կա վեր ընգած: Էդ գութանի խոփը վենձ գորություն ունի:

Ասմ ա.— Մեչը մտի, հանե:

Մեչն ա մտնմ:

Ասմ ա.— Խոփն ինձ տու, եղնա քի կհանեմ:

Ասմ ա.— Չէ ինձ հանե, ես ձեռիս կբերեմ, ծանդրնա դու կարալ չես խոփը հանես (էն տղեն գլխի ա էլած ըլլմ, որ իրան միչին թողալ տի):

Էնա որ շատ, որ շատ, էդ տիրացուն չրանմ ա, էդ ջղացքարը գլխի վրա կաղնած տեղիցը բոթմ ա, ֆորի վրեն ա գձմ, թողմ ա գնմ:

Էն տղեն էլ էդ խոփի գորությունը գիդենալիս չի ըլլմ: Սիե մատով տալիս ա (ինքը ցույց է տալիս ձեռքի շարժումով), հլե մին էլ տենմ ա ջղացքարը էդ գնաց, ֆորի բերանը բաց էլավ: Էնա գութանի խոփի գորությունով ֆորիցը դուս ա գալի, ջղացքարը էդ վրեն գձմ, թողմ, խոփը վեր ունմ, գնմ: Գնմ ա էդ ժանգոտ խոփով ինչ ուզմ ա, շինմ ա: Իրան հմար մի կարքին օթախ ա շինմ, ապրուստ ա դզմ, մորն էլ բերմ ա կուշտը:

Եղնա հրսանիք ա ըլլմ, մի սիրուն ախչիկ ա ուզմ, լավ պիմ, սիրուն շորեր ա առնմ համ մոր հմար, համ կնգա, առոք-փառոք ապրմ են:

Էն տիրացուն էլ հե գիդե, թե ֆորըմը մեռել ա:

Հմա մի օր դրանց դոնովն անց կենալիս ա ըլլմ, տենմ ա էդ սիրուն օթախը, ըրմանմ ա, ասմ ա.— Էս ո՞ւմ տունն ա, որ չկել հմի գիդեմ ոչ:

Եղո հարց ա ըլլմ, իմանմ ա, որ էն տղեն ա:

Ըտի դա մտկի յա ընգնմ, ասմ ա.— Ո՞նց անեմ, որ կարենամ էն գութանի խոփը դրա ձեռիցը ճանգս գձեմ: Շատ մտածմ ա, եղնա գնմ ա մխելի մանդըրը-մանդըրը բաներ ա առնմ (քորոց, ասեղ, բուլավկա, կոճի, մաստակ), չերչու շորեր ա հաքնմ, մեշոկն ուսն ա գձմ, տանմ ա, որ ծախե, բալի էն տղի կնգանը խափե, էն գութանի խոփը ձեռիցն առնի:

Գալիս ա նհանց դռանը կաղնմ, ասմ ա.— Ասեղ, քորոց, բուլավկա, հուլունք, կոճի, մաստակ եմ ծախմ:

Էն տղի կնիկն ու մերն էլ ընդի նստած են ըլլմ:

Ասմ ա.— Ա՛յ քիրա ջան, այ ախչիկ ջան, առնմ չէ՞ ք:

Ասմ են.— Չէ՛, մենք ունինք:

Ասմ ա.— Ո՞նց թե չէ, բա սիե բաներին կնիկը թամահ չի անի՞ լ:

Պառավն ասմ ա.— Ի՞նչ արժե:

Ասըմ ա.— Տո՛հլե ինչով ըլի, կտամ, ժանգոտ պղնձի կտոր ըլի, էրկաթի կտոր ըլի, գութանի հին ու մին խոփ ըլի, ձու ըլի, փող ըլի, ընչով ըլի՝ կտամ:

Պառավն ասըմ ա.— Ախչի, ախչի, գնա մեր տանը մի ժանգոտ խոփի կտոր կա վեր ընգած, բի տանք առնինք: Էնա հարսը գնըմ ա բերըմ. տալիս են՝ մաստակից-բանից առնըմ (եղին տանի կնանոնցը, տհէ շաշ բաների հմար թեզ են խափվըմ էլի): Եղնա անց ա կենըմ մխելի վախտ, էն նաչար տղեն զարթնըմ ա քնիցը, տենըմ ա, որ ոնչ օթախն ա ընդի, ոնչ գութանի խոփն ա ընդի, ոնչ էլ կնիկն ա ընդի: Ինքն ու մերն ընդի՝ էլ էն չլոտնին, էլ էն գրչոտնին, դառ ու դարդակ ընդի մնացած: Էնա նաչարր վի ա կենըմ, դարդ ա անըմ, բողմի ա գալի, խեխտվըմ ա: Վի ա կենըմ, գնըմ, հլե մչա ման ա գալի, գնըմ ա էն տիրացվի տունը գոնըմ: Տենըմ ա՝ տիրացուն տանը չի, իրա կնիկն ա տանը, հլը մչա լաց ա էլել, աչքերն ուռել են: Ըտի դրանք իրար փթաթորվըմ են: Ասըմ ա.— Բա՛ դուն էդ ի՞նչ բերիր իմ գլխին, ա կնիկ ջա՛ն:

Ասըմ ա.— Դե՛ էս ի՞նչ անեմ, էս գութանի խոփի գորութինը գիդեի ոչ, համ էլ քու մերն ասավ՝ էս էլ տվի, էս ի՞նչ անեմ: Դուն էլ ինձ թամբահ չէիր արել, որդիա՞ն տեի գիդենալ:

Եղնա ասըմ ա.— Ինձ ըստիան տար, էս շան ձեռիցն ազատե, էս ըստի կենալ չեմ:

Ասըմ ա.— Բա ո՞նց անենք. կարալ չե՞ս էն խոփը զգնուս ինձ տաս, եդ գնանք իրար հետ ապրի՞նք:

Ասըմ ա.— Ես տեղը գիդեմ ոչ, հմա էսա մթնըմ ա, դու դեսնի տապ արա, ըրիգունն ինքը որ գա հա, էս բալի իմանամ տեղը, քի տամ տանիս:

Էնա դրան ըտի պիըմ ա: Ըրիգունը տիրացուն գալիս ա, էդ գութանի խոփին եդ սհե ձեռով թխկացնըմ ա, ըստողի վրա ամեն բան էլ լքցվըմ ա, նստըմ ա լակըմ, զխտվըմ, եղնա տանըմ ա խոփը պիըմ ու գալի շնթորըմ: Էդ տղեն տեղն իմանըմ ա, թե որդի պիեց, իրան կնիկն էլ թաքուն դուռը բաց ա թողըմ, դա խոփը վեր ա անըմ ու դնըմ:

Գնըմ ա խոփին թխկացնըմ, ասըմ ա.— Քեզանից խնթորըմ եմ, որ էլ եդ իմ տունը, իմ ապրուստն ըստի ըլի, էս ու իմ մերն էլ միչին, իմ կնիկն էլ կոխկիս:

Քնըմ ա, եդ բռավուտը վի կենըմ, տենըմ ա ամեն բանն էլ ուսլուբին սաղով իրա տեղն ա, կնիկն էլ՝ կոխկին քնած:

Էն տիրացուն էլ վի ա կենըմ, տենըմ ա տհենց ա, ասըմ ա.— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, էս ո՞նց արի, որ տանիլ տվի:

Դա գլխին ու ոտին վեր ա հատըմ, միրուքն ու մագերր փետըմ ա, հմա նոր էլ գլուխը քարովը կտա, որ զադ ձեռ կզձե: Եդ դաթար կենըմ չի, ընդնըմ ա յանապանա, բալի եդ գզնի: Էլ եդ գնըմ ա չերչու շորեր ա հաքնըմ, եդ նհե մանդըրը-մունդըրը բաներ ա առնըմ, գնըմ ա էն տղի տունը եդ գոնըմ, եդ ասըմ ա.— Հա՛յ ասեդ, քորոց: Ու դեռ հլա խոսկը բերնըմը կիսատ ա ըլըմ, էն տղի կնիկը դռնիցը դուս ա գալի, ասըմ ա.— Գնա՛, վայ տամ քու գլխին. էս ճնաչըմ չե՞մ եդ ով էս, գնա պետկը չի:

Դա տենըմ ա դրանով էլ կարըմ չի խափե, հմի էլ գնըմ ա ուրիշ շորեր ա հաքնըմ, ուրիշ ֆորմ ա մտնըմ, եդ գալի: Էդ վախտը մարթը տուն էկած ա ըլըմ գործի տեղից:

Գնըմ ա դուռը, ասըմ.— Հայ էս եմ ծախըմ, հայ էն եմ ծախըմ:

Մարթը տանիցը դուս ա գալի, ասըմ ա.— Արի ըստի:

Դրա սիրտը ահ ա ընգնըմ, հմա եդ գնըմ ա:

Տանըմ ա տուն, ասըմ ա.— Հլա էդ գլխիդ բաշլուղը եդ արա:

Բաշլուղը եդ ա անըմ, տենըմ ա ստանի միրուքը կզակիցը կախ էլած:

Ասըմ ա.— Բա ըմանչըմ չե՞ս, տիրացուն առուտուր կանե՞:

Դա կարըմ չի ձեն հանե:

Եղնա դրա միրուքը կենդկենդ փետում ա, էն խոփն էլ կրակումը տաքացրած ա ըլըմ, բերըմ ա պողացրած էվետ դրա դոշին ա դնըմ, ասըմ ա.— Քու սիրտը սառն ա, պետք ա տաքացնենք, որ խիղճ ունենաս, խալխի ըշխատանքի վրա աչկ չի դնես, քու հալալ ըշխատանքով ապրիս։ Դրանից եղն ինքը էդ խոփով վար ա անըմ, ցանըմ ա, հընձըմ, բոլ ապրուստ ա դգըմ, բախտավոր ապրըմ են։

Հմա էն գրողի տարածը նհե խալխի ըշխատանքի եղնա էլ, աչքը ծակ, դոնեդոտն ընգած՝ սատկըմ ա, ոնչ խիղճ ա ունենըմ, ոնչ էլ սառած սիրտը տքանըմ ա։ Նոր էտա պրծնըմ են ամեն ցավից-շոռից. նհանք հասնըմ են իրանց մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին։